Սաղիանի վանքը մի պատուական տեղ և առողջարար օդի և ջրի մէջ լինելով՝ արժանի է վերանորոգութեան և խնամքով պահպանութեան։

Ուստի և յաշմար է Զամախւոյ Առաջնորդաց ամարանոց լինելու, ինչպէս որ նախքան պօլօժէնիայի հաստատուիլը 1836 թիւը՝ 'ի վաղուց հետէ Առաջնորդարան էր Զամախւոյ թեմի, և այդ պատճառաւ Առաջնորդաց ցանկ ու ցուցակ կազմողը պէտք է Սաղիանի վանքի գերեզմանատանը որոնէ ու գտնէ Առաջնորդաց անուանքն, ինչպէս և ես ուրքան կարելի էր աշխատեցի գտնել և ցուցակագրել Առաջնորդաց անուանքն, ըստ որում հին տաճարի շինութեան արձանագրերից 2—3 հատ... քարակտոր հաղիւ են երևում այստեղ այնտեղ ընկած։ Եւ ոչ թեմիս քաղաքաց և գիւղերի եկեղեցեաց վերայ կարողացայ արձանագրեր գտնել, որոնցից երևար Առաջնորդի անունը, իսկ Մէյսարու սուրբ Աստուածածնի վանքի վերայ կան արձանագրեր, նոյնպէս և նորա գերեզմանատանը, բայց նոքա ցոյց են տալի նոյն վանքի վանահարց անուանքը, զորս՝ Աստուած յաջողէ՝ մի օր ցուցակագրած և համառօտ նկարագրած վանքի անցեալ և ներկայ դրութիւնը կը՛ յանձնեմ 'ի տպագրութիւն. վասն զի Մէյսարու վանքի տեղն ու դրութիւնը բարձրահայեաց և սրտաբաց լինելով, և օդն ու ջուրն աւելի առողջարար, նոյնպէս և տաճարի և սենեկաց շէնքերն սրբատաշ քարով ու կրով շինած և կանգուն մնացած լինելով՝ շատ գերազանց է և վայելուչ բնակութեան համար՝ քան Սաղիանի վանքը, ինչպէս Մէյսարու ժողովրդեան այցելելու միջոցիս՝ գնացինք քանի հոգւով յուխտ և 'ի համբոյր մեր նախնիքներից մնացած հոգևոր յիշատակին, որ այսօր ամայի և տխուր մնացած սպասումէ բարեպաշտ ազգայնոցայցելութեան։ Վերջապէս Մէյսարու վանքի և ապերախտ ժողովրդեան համար կը գրեմ ժամանակին։ Ահա Սաղիանի վանքի Առաջնորդաց ցուցակը, որ ըստ Աղուանից պատմութեան ըսկսվումէ Եղիշէ Առաքեալից (72 աշակերտներից) Քրիստոսի 50 թուից կրկնվումէ մեր սուրբ Լուսաւորչի թոռն Գրիգորիսից- 350 թուից և վերակրկնվումէ ս. Մեսրովբ թարգմանչից - 420